

Հայոց Աւշնի՝ տիրոջն Կառնիկաւոյ, եւ ՚ի կաթողիկոսութեանն Հայոց Տեառն Յակոբայ, որ է քուերորդի Տէր Գրիգոր կաթողիկոսին» (Անաւար-
զեցոյ)։- Գունագոյն քարինքն, հրահալքն եւ երկաթեայ անօթքն՝ յայտ
առնեն՝ իսահմանս բովուց՝ իգահս Կիլիկիոյ լինել Կրակկայ, գոր՝ հա-
մարձակ քաղաք կոչէ բնիկ նորին վարժապետն այն Յակոբ։- Մետասան
ամօք յառաջ քան զայս յիշատակ՝ քահանայ ոմն Յովհաննէս անուն որդի
Միրունի եւ Կիրայի՝ իձեռն այլոյ քահանայի՝ գրել տայ Աստուածաշունչ
մատեան «Ի Գիւղաքաղաքն որ Կրակկայ կոչի,

Ձեռամբ Կոստանդին քահանայի,
Եօթըն հարիւր Հայոց թըլի
Վաթսուն եւ վեց անցեալ ամի.
Ընդ հովանեաւ Սուրբ Գրիգորի,
Ի հայրապետութեան Տեառն Կոստանդի,
Հայոց Մեծաց հեղինակի.
Ի թագաւորութեան Հայոց՝ Աւշնի՝
Բարեպաշտի եւ յոյժ հեզի»:

Ահա յայտնեցաւ եւ եկեղեցին Կրակկայ, գոր սա գիւղաքաղաք կոչէ,
մինչ չեւ էր հաստատեալ՝ իմա Դասատանն. համարելով զսա բարձրա-
գոյն իմն ուսմանց տեղի՝ հաւանելի է եւ բարձրանալ պատուոյ շինատեղ-
ւոյն եւ քաղաքանալ։- Իսկ անուն վանացն Ջերմաղբիւր, գոր եւ գուշա-
կեաք (114) այսպիսի լինել զգրեալն ուրեք Գերմաղբիւր, յիշեցուցանէ զմի՝ ի
ջերմրկաց՝ որ աստ եւ անդ նշանակին՝ իԿիլիկիա, եւ յօժարիմ կարծել
յաւետ զԻլիճայն անուանի՝ որ առ փայտեայ կամրջաւ (134):

Իսկ Դասատունն կարգեալ՝ ի Դ Լեւոնէ՝ թուի սկզբնաւորեալ
կանխագոյն եւս, եթէ այսպէս օրէն իցէ գուշակել եւ մեկնել զբանս այլոյ
վարժապետի, որ ութ ամօք յառաջ քան զՅակոբ գրէր (1320). այն ինքն է,
«Ստեփանոսի Կրակցոյ, Բանի իմաստից սպասաւորի», որպէս կոչէ զինքն,
եւ ասէ յայնմ ամի ստացեալ զգիրս Գեորգայ Սկեւոսցոյ Մեկնութեանն
Եսայեայ, «յողորմութենէ քրիստոսասէր արքային Հայոց՝ Օշնի, եւ ՚ի
թելադրութենէ բարեսէր...? ... Թորոս Չաւտկայ որդւոյ Ճաւֆրի, ընդ որոյ
հովանեաւն հովանաւորիմ, եւ գրկացն կալանօք գրգանամք, ես եւ որ ընդ
իս մանկունքս են՝ իերկս իմաստից աստուածաշունչ տառից»: